

ՈՂԶՈՅՆ ՔԵԶ ԿԱՐԻՔ

(Աղա Նեգրիից)

Ձը գիտեմ ո՞վ է դռնակս բաղխում...:

—Այդ դձու ես եկել, այ դաժան կարիք,
Գերեզմանների բնակչիդ ողջոյն,
Հպարտ իմ հողուն գալըդ է բարիք,
Եւ քեզ, ո՞ կմախք, մահուան բռնաբեր,
Դիմաւորում եմ ահա անտարբեր:

Բայց ինչո՞ւ լուռ ես, բռնակալ ոգի,
Է՞ր չես շտապում մտնել իմ խրճիթ,
Դէ, շուտ, թեւերս ջարդիր, անհողի,
Յցիր մագիլներդ սրտիս մէջ վճիտ.
Կանգնիր խեղճ մօրս մահճի գլխի տակ,
Որպէս մահաբեր հողէառ հրեշտակ:

Դու տատանւում ես, կմախք այլայլուած,
Թէ՞ խնայում ես գարունը կեանքիս,
Օ՛, անհոգ կացիր, չեմ ընկնի յաղթուած՝
Կեանքի դու մարտում ծաղիկ հասակիս,
Տարերբների մէջ, տանջանքի բովում
Կամրանայ հողիս, կը փթթի գարուն:

Իմ մրկածուի չարասանջ կրծքում
Սրտիս յոյզերը դեռ անհանգչելի,
Երկնից անսահման, անհուն բարձունքում
Մտքիս թռիչքն է անհասանելի.

Որքան էլ նայես խիտո, մռայլ դէմքով,
եւ պիտի շնչեմ իմ սիրած կեանքով:

Տեսնում ես դաշտը ծաղկունքով զուգուած՝
Ողջ բնութիւնն է եռում, բորբոքւում...
Լսում ես երգը արտուտի յուզուած՝
Արձազանք տալիս եթեր-բարձունքում:
Ողջը շնչում է վառ յուսոյ արև,
Ողջը թեւ առած՝ ձգտում է վերև...

Օ, դաժան կարիք, վհուկ այլանդակ—
Սև ծածկոցի տակ, քեզնից չեմ սարսում:
Տանջուած, բորբոքուած անյաղթ կրճերիս տակ
Խեղճ ժողովրդիս արիւնն է հոսում:
Թող կորչի վախը—եւ չեմ վհատել,
Հողիս ճախրում է դէպի ջինջ եթեր:

Իմ կէտ նպատակ՝ յաղթական, իշխող
Աշխատանքն է սուրբ, ցնորքը յուզող,
Հիասքանչ նուագն դիւթիչ երգերի
Եւ շոյունքները դարնան թովչալի,
Մաքուր, անաղարտ անհուն եթերը,
Շողը աստղերի, ծաղկանց հիւթերը:

Ձբացիր ուրեմն, եղկելի ստուեր,
Ձբնաղ բնութեան պայծառ ցոլքերում,
Կեանքն արթնացաւ, շուրջ մանուշակներ
Տատասկների մէջ ծաղկում են, բուրում:
Գոռ կապանքներդ եւ կը խորտակեմ,
Որ նորոգ կեանքի գարունը երգեմ...

Թարգմ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ